ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3301, ք. Կապան, Չարենցի 1
հեռ. /+37460/720072
էլ.փոստ kapanmayor@gmail.com, info@kapan.am

3301 г.Капан, Чаренца 1
тел. /+37460/720072
e-mail: kapanmayor@gmail.com, info@kapan.am

06 օգոստոսի 2024թ. N **Ե-07/3857**
Ձեր _____ N___

<<ՄԱՆՍԵՐԳՈ>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

ՄԱՆԱՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ա Գ Ի Ր
(ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի վերականգնման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-22/19» պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«Կապանի համայնքապետարան», ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Մանսերգո>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մանաս Կարապետյանի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20.12.2022 թվականին կնքվել է ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի վերականգնման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-22/19» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«Կապանի համայնքապետարան», ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Մանսերգո>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մանաս Կարապետյանի (այսուհետ՝ Կապալառու) միջև 30.12.2022 թվականին կնքվել է «Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի վերականգնման աշխատանքների կատարման 20.12.2022 թվականի N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-22/19» պայմանագրի վերաբերյալ N 1 Համաձայնագիրը, որով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև՝ 01.11.2023թ.:

«Կապանի համայնքապետարան», ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Մանսերգո>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մանաս Կարապետյանի (այսուհետ՝ Կապալառու) միջև 29.12.2023 թվականին կնքվել է «Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի վերականգնման աշխատանքների կատարման 20.12.2022 թվականի N

«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-22/19» պայմանագրի վերաբերյալ թիվ N 2 Համաձայնագիրը, որով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև՝ 01.11.2024թ.:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ *Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի վերականգնման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:*

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն պատվիրատուն իրավունք ունի՝ *միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.*

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհապույց վերացման ողջամիտ ժամկետները.

Պայմանագրի 6.3 կետի համաձայն՝ Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը նույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

Պայմանագրի 6.4 կետի համաձայն՝ Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

2. Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի միակողմանի հաստատած հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում

պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովման 19.05.2023 թվականի N O.AB.100.12GIB. PIED.0.9769.23 Երաշխիքը գործել է թողարկման օրվանից մինչև 01.11.2023թ. օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 20.03.2024թ. ներառյալ, որից հետո Երաշխիքը համարվում է ուժը կորցրած:

<<Մանսերգո>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Մանաս Կարապետյանի ծանուցվել է Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովումը (երաշխիքը) ներկայացնելու համար, սակայն չի ներկայացրել:

Հաշվի առնելով Կապանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բանժնի պետի 29.07.2024 թվականի զեկուցագիրը և այն, որ Կապալառուն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, ինչպես նաև չի ներկայացվել Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովումը (երաշխիքը), հետևաբար Պատվիրատուն օգտվելով Պայմանագրով նախատեսված իր իրավունքից, ***որոշեց***.

«Կապանի համայնքապետարան», ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի և <<Մանսերգո>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Մանաս Կարապետյանի միջև 20.12.2022 թվականին կնքված ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի վերականգնման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-22/19» պայմանագիրը 06.08.2024 թվականից միակողմանի լուծել, Կապալառուի նկատմամբ կիրառել Պայմանագրով և Օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

Քաղաքաշինության և հողաշինության բաժին
հեռ. +37460720074